Рис. 1. Дифрактограммы молибденита и продукты его механической обработки: исходный концентрат (1) и активированный 60 мин в воде (2,3), в воздухе (4,5)

Таблица
Рентгенографическая идентификация молибденита

Линии	Экспериментальный образец		Эталон ASTM, 6-0097	
	d	I	d	I
1	6,13	100	6,15	100
2	3,07	13	3,10	30
3	2,28	23	2,28	45
4	1,824	10	1,83	25
5	1,536	54	1,538	12
6	1,475	2	1,529	70
7	1,227	7	1,225	5
8	1,193	2	1,179	5

Минералогические исследования показали, что концентрат содержит в основном молибденит (MoS_2), кварцит (SiO_2), соединения молибдена с железом (FeMoO_4). Полуколичественные спектральные исследования показали содержание в них (%): Si, Al, Fe, Mg - 0,1...1, Cu - 0,003...1, Pb- 0,03...1, Zn - 0,01...0,1, Sn; Mn; Ba; Bi и Ag – следы.

Так как основным минералом, входящим в молибденитовый концентрат, является MoS_2 , для исследования особенностей физико-химических превращений концентрата при механохимическом и тепловом воздействиях, в основном, изучали только поведение MoS_2 .

MoS_2 дает весьма развитую поверхность в процессе активирования в водном режиме, особенно в интервале измельчения 15...30 мин, достигая 42,6 г/см³. Удельная поверхность других минералов при таких условиях значительно больше. Однако при измельчении в воздушной среде поверхность молибденита значительно меньше. В данном случае, вероятно, проявляются особенности кристаллического строения минерала.

При измельчении MoS_2 на дифрактограммах происходит некоторое уширение дифракционных рефлексов. Это свидетельствует о незначительной эффективности указанного режима. Поэтому остальные опыты по измельчению проводились в более жестких условиях энергонапряженности и при значительных временных интервалах механохимической обработки (60 мин).

Кристаллическая структура молибденита в разных средах проявляется необычно. Это находит отражение в резком изменении соотношений интенсивностей рефлексов, например, с $d = 3,07$ и $1,227 \text{ \AA}$ (рис.1, линии 2,3). Линия $d = 2,28 \text{ \AA}$ на дифрактограмме исходного образца - вторая по интенсивности (рис.1, линия 1), а в водном и воздушном режимах измельчения - почти четвертая (рис.1, линии 2,3 и 4,5). Структура молибденита при активации в воде претерпевает бо'льшие изменения, чем в воздухе. Увеличение рефлекса 3,07 в водном и воздушном режимах связано с появлением свободной серы.

Если в водной среде при активации ниже 30 мин на дифрактограммах элементарная сера в MoS_2 не обнаруживается, то при 60 мин ее содержание можно заметить. Отсутствие же на дифрактограммах активированных фракций линий новообразований говорит о рентгеноаморфности последних.

Известно, что при нагревании в температурном интервале 400...600⁰C MoS_2 окисляется до молибдата в диффузионном (400⁰C), диффузионно-кинетическом (500⁰C) и кинетическом (600⁰C) режимах. При температуре 500⁰C имеет место реакция: $\text{MoS}_2 + 3,5\text{O}_2 = \text{MoO}_3 + 2\text{SO}_2$. Интервалы температуры, при которых возникает окисление и восстановление минерала, зависят от его крупности и составляют для фракций от 0,063 до 0,2...0,35 мм соответственно 207...300 и 365...510⁰C. Эти данные предварительно были получены с помощью дифференциально-термического анализа при всасывании воздуха через массу минерала. Оптимальная температура обжига молибденитового концентрата составляет 570...580⁰C. Окисление неактивированного молибденита при нагревании со скоростью 70 ⁰C/мин в атмосфере воздуха протекает в температурном

интервале 390...700⁰C с образованием молибдата (MoO₃), который плавится при 790⁰C. Что касается превращения MoS₂ при нагревании без доступа воздуха, то известно, что при сильном накаливании в электропечи получается Mo₂S₃.

Температурный интервал образца неактивированного молибденитового концентрата равен 410...775 ⁰C (рис.2, кривая 1). По нашим данным, одной из промежуточных фаз, кроме молибденита, при 600 ⁰C является MoO_{3(гекс)}, что подтверждается фиксированием на дифрактограмме линии этого соединения $d = 3,46 \text{ \AA}$. Из конечных продуктов зафиксирован также Mo₄O₁₁. Появляются также оксиды молибдена $d = 4,12; 3,74; 3,45 \text{ \AA}$ и др. Плавление смеси MoO_{3(ортотромб.)} + Mo₄O₁₁ в температурном интервале 775...900 ⁰C сопровождается образованием Mo₄O₂₃ и Mo₉O₂₆ (см. схему).

Механохимическая активация молибденита сильно влияет на его термические характеристики. Даже после 30 - секундной обработки на мельнице М30 скорость окисления минерала резко возрастает, что очевидно из кривых (рис. 1, кривые 1 и 2). Если при увеличении времени предварительной активации до 15 мин на кривых дифрактограмм имеет место существенное изменение, то на кривых скорости нагревания это незначительно влияет на ход кривых (рис. 1, кривые 3...6).

Фазовые превращения при нагревании механически обработанного в водной среде (15 мин) молибденита, вероятно, происходят уже при температуре 340⁰C, о чем можно судить по уширению линии $d = 6,62$ до $6,45 \text{ \AA}$. Если учесть, что это основные рефлексы Mo₃O₄ (ASTM, 27-319), то превращение можно представить следующим образом: $6\text{MoS}_2 + 4\text{O}_2 = 2\text{Mo}_3\text{S}_4 + 4\text{SO}_2$, т.е. обессеривание молибденита происходит при довольно низкой температуре. Однако сульфид Mo₃S₄ неустойчив, так как при повышении температуры до 450 ⁰C межплоскостное расстояние основной линии уменьшается до $6,16 \text{ \AA}$. Часть минерала окисляется до MoO₃, на диаграмме фиксируются линии $d = 6,96; 3,45; 3,31 \text{ \AA}$ и др. При температуре 680 ⁰C, соответствующей окончанию экзотермы, продукты термической обработки молибденита представлены смесью ортотромбической и гексагональной модификации MoO₃. В случае неактивированного MoS₂ картина резко отличается (см. схему), т.е. сдвиг температур в начальной и окончательной стадиях окисления минерала в меньшую область сопровождается изменением механизма этого процесса.

Ход ДТА-кривых молибденита, предварительно активированного в водном режиме в течение 15 мин, при нагревании в различных условиях несколько отличается. Механоактивация в течение 60 мин заметно влияет на термические характеристики MoS₂, о чем можно судить по понижению максимума 560...570⁰C (рис.2, кривые 3...7).

Своеобразно проявляет себя при нагревании MoS_2 , активированный в водном режиме в течение 60 мин (рис.2, кривые 2...8). Если в предыдущем случае отмечено уширение рефлекса молибденита до $6,45 \text{ \AA}$ с образованием при 340°C Mo_3O_4 , то в последнем случае - сужение до $6,09 \text{ \AA}$ при температуре 300°C . Кроме того, при указанной температуре имеет место полиморфный переход одной формы MoS_2 в другую. При продолжительном нагреве до 440°C кристаллическая структура минерала разрушается, что приводит к существенному уменьшению интенсивностей основных линий, при этом межплоскостное расстояние самого сильного рефлекса вновь несколько расширяется, часть минерала окисляется до молибденита (рис. 2, кривая 8). При 630°C MoS_2 полностью окисляется до MoO_3 (орторомб).






Рис. 2. ДТА-кривые молибденита и продуктов его механической активации: 1 – неактивированного; 2...10 – активированного: 2...8 – в водной среде при продолжительности активации (мин): 2 – 3; 3 – 5; 4 – 7; 5 – 10; 6 – 15; 7 – 30; 8 – 60, 9 – в воздушной; 10 – комбинированной – 60

Схема. Фазовые превращения молибденита при нагревании


Исходная фракция:




После активирования в водном режиме в течение 15 мин:



После активирования в воздушном режиме в течение 15 мин:



После активирования в комбинированном режиме в течение 15 мин



Фазовые превращения молибденита, активированного в течение 15 мин в водной и воздушной средах при нагревании до $445\dots450^\circ\text{C}$, имеют одинаковый характер, а при более высоких температурах существенно отличаются. Так, при 560°C наблюдается огромное количество MoS_2 , значительная часть которого уже прошла окисление, что подтверждается появлением на дифрактограмме мощных линий с $d = 3,45; 6,85 \text{ \AA}$ и др.

Особенно сильно отличаются фазовые превращения описываемой фракции при достижении 740°C . Основным соединением становится Mo_9O_{26} , который при нагревании неактивированного минерала до температуры, близкой к 775°C , не фиксируется. Не отмечается его образование и в случае термической обработки минерала, активированного в водной среде. Таким образом, исходя из изложенного, становится очевидным, что характер фазовых превращений

MoS₂ в процессе нагревания в воздушной среде сильно зависит от режима его предварительной механохимической активации.

Состав фаз минерала, обработанного в комбинированном режиме при нагревании до 450...525^oC, один и тот же, однако количество окислов молибдена по мере повышения температуры резко возрастает, что подтверждается увеличением интенсивности рефлексов с $d = 3,44...3,46; 6,87...6,96 \text{ \AA}$ (см. схему).

Таким образом, сравнение результатов поведения MoS₂, входящего в состав молибденитового концентрата, при механохимической и термической активации показало, что процессы, протекающие при механохимической активации и термической обработке, имеют аналогичный характер. В обоих случаях кристаллический малореакционноспособный минерал MoS₂ подвергается глубоким химическим изменениям, превращаясь в различные соединения молибдена и, в конце концов, в аморфный оксид (MoO₃). Этот вывод подтверждается данными рентгенофазового и термографического анализов.

Закключение. Результаты механохимического и термического анализов подтверждают, что MoS₂ претерпевает в процессе механической активации существенные изменения, что находит отражение на рентгенограммах и термограммах. При этом механохимическая активация MoS₂ при меньших продолжительностях подвергается наименьшим изменениям. Сопоставление результатов рентгеновских исследований исходных и обработанных образцов показывает, что при увеличении продолжительности активации до 60 мин структуры последних значительно разрушаются, образуются новые фазы, которые рентгеноаморфны.

Своеобразно проявляет себя при нагревании MoS₂, активированный в водном режиме в течение 60 мин. В данном случае при более низких температурах имеют место разные случаи фазообразования MoS₂, вплоть до полного окисления до MoO₃(орторм.). То же самое протекает при комбинированном активировании.

Следовательно, протекающие при механохимической активации и термической обработке процессы имеют аналогичный характер. В обоих случаях кристаллический малореакционноспособный минерал MoS₂ подвергается глубоким химическим изменениям, превращаясь в различные соединения молибдена и, в конце концов, в аморфный оксид (MoO₃). Результаты исследования подтверждены методами рентгенофазового и термографического анализов.

Таким образом, механохимия является эффективным способом для получения аморфного MoO₃ экологически чистыми методами. Полученный активированный оксид MoO₃ может служить сырьем для дальнейшего получения

ферромолибдена методом СВС. В работе решены также экологические вопросы.

Исследование выполнено при финансовой поддержке ГКН МОН РА в рамках Армяно-Белорусского совместного научного проекта АБ 16-48.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. **Кулебакин В.Г.** Превращения сульфидов при активировании.- Новосибирск: Наука, Сибирское отделение, 1983.- 209 с.
2. **Аввакумов Е.Г., Болдырев В.В., Косовудский И.Д.** Механическая активация твердофазных реакций. Сообщ. 1: О взаимодействии пирита с железом // Изв. СО АН СССР. Сер. хим. наук. -1972.- Вып. 4, N9.-С. 45-50.
3. **Зеликман А.Н.** Металлургия тугоплавких редких металлов. -М.: Металлургия, 1986. - 440 с.
4. **Мартirosyan В.А., Закарян Э.Г., Сасунцян М.Э.** Получение ферромолибдена методом СВС // XVIII научно-практическая конференция: Российско-китайский журнал “Содружество”.- 2017.- Ч. I, N17.-С. 56-58.
5. **Martirosyan V.A.** Chemical-Metallurgical Processes of Reprocessing the ores of Armenia: Monograph.- Germany: Lap Lambert Academic Publishing, 2015, ISBN: 978-3-659-76299-4.-154 p.
6. **Сасунцян М., Мартirosyan В.** Получение ферросилиция методом алюминотермического восстановления отходов Армении: Monograph.- Germany: Lap Lambert Academic Publishing, 2016, ISBN: 978-3-659-96596-8.- 110 p.
7. **Болдырев В.В.** Механохимия и механическая активация твердых веществ // Успехи химии / РАН.- 2006.- Т.75, вып. 3.- С. 203-216.
8. **Бутягин П.Ю.** Разупорядоченные структуры и механохимические реакции в твердых телах // Успехи химии.- М.: Наука, 1984.-Т. 53, N11.- С. 1769-1789.
9. **Торосян А.Р., Данелян Н.Г.** Влияние механической обработки на процесс термического восстановления MoS₂ металлическим магнием // Арм. хим. журнал.-1992.-Т. 45, N1-2.- С. 21-26.
10. **Цветков А.И., Пилюян Г.О.** О термическом анализе тонкодисперсных веществ // В кн.: Физические методы исследования минералов осадочных пород.- М.: Наука, 1966.- С. 294-306.
11. **Ревенко А.Г.** Рентгеноспектральный флуоресцентный анализ природных материалов.-Новосибирск: Наука, 1994. - 264 с.

Национальный политехнический университет Армении. Материал поступил в редакцию 03.10.2017.

Վ.Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Է.Գ. ԶԱԲԱՐՅԱՆ, Մ.Է. ՍԱՍՈՒՆՅԱՆ

**ՄՈԼԻԲԴԵՆԻ ԴԻՍՈԼԻՖԻԴԻ ՎԱՐՔԸ ՄՈԼԻԲԴԵՆԻՏԱՅԻՆ ԽՏԱՆՅՈՒԹԻ
ՄԵԽԱՆԱՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԶԵՐՄԱՅԻՆ ՄՇԱԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

Քննարկվել են մոլիբդենիտային խտանյութում MoS_2 -ի վարքը մեխանաքիմիական ակտիվացման ընթացքում և ջերմային բնութագրերի պարզաբանումը նրա ակտիվացած վիճակում: Մոլիբդենիտային խտանյութի ակտիվացումը կատարվել է թրթռաղացում օդային և ջրային ռեժիմի պայմաններում, իսկ ջերմային մշակումը՝ ջերմաձանրաչափական եղանակով: Ցույց է տրվել, որ մեխանաքիմիական ակտիվացման և ջերմային մշակման գործընթացները նման են միմյանց. երկու դեպքում էլ բյուրեղային, փոքր ռեակցիոն ակտիվություն ցուցաբերող MoS_2 միներալը ենթարկվում է խոր քիմիական փոխարկումների՝ առաջացնելով մոլիբդենի տարբեր միացություններ և, ի վերջո, վերածվում է ամորֆ մոլիբդենի օքսիդի (MoO_3): Ստացված ակտիվացած մոլիբդենի օքսիդը կարող է ծառայել որպես հումք՝ հետագայում ԲԻՄ գործընթացով ֆերոմոլիբդեն ստանալու համար: Ստացված արդյունքները հաստատագրվել են ռենտգենաֆազային և ջերմաձանրաչափական վերլուծության եղանակներով: Աշխատանքում լուծվել են նաև բնապահպանական հարցեր:

Առանցքային բառեր. մոլիբդենիտային խտանյութ, մեխանաքիմիական ակտիվացում, մանրացում, մոլիբդեն, երկաթ, սիլիցիում, ֆերոմոլիբդեն:

V.A. MARTIROSYAN, E.Z. ZAKARYAN, M.E. SASUNTSYAN

**BEHAVIOR OF MOLYBDENUM DISULPHIDE AT THE MECHANOCHEMICAL
AND THERMAL TREATMENT OF THE MOLYBDENITE CONCENTRATE**

The behavior of MoS_2 , forming part of the molybdenum concentrate at mechanochemical activations is discussed and its thermal characteristics in the activated state are studied. The mechanochemical activation of molybdenum concentrate is carried out in a vibratory mill under water and air conditions, and the thermal studies - by the derivational method. It is shown that the processes going on at mechanochemical activation and heat treatment are similar, and in both cases, the low-reactivity mineral MoS_2 undergoes profound chemical changes, turning into various molybdenum compounds and, eventually, converting into an amorphous oxide (MoO_3). The obtained activated MoO_3 oxide can serve as a raw material for the further production of ferromolybdenum by the SHS method. The results of the study are confirmed by X-ray phase and thermographic analyses. Ecological problems are also solved in the work

Keywords: molybdenum concentrate; mechanochemical activation; grinding; molybdenum; iron; silicon; ferromolybdenum.

ՀՏԴ 669.243:546.56

ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱ

Ա.Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գ.Գ. ՇՈՒԼԻՅԱՆ, Թ.Ա. ՎԱՆՅԱՆ, Ս.Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
Ա.Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

**ՊՂՆՁԻ ՕՔՍԻԴԱՑԱԾ ՀԱՆՔԱՆՑՈՒԹԻ ՀԴԴՐՈՋԵՐՄԱՅԻՆ ՍՈՒԼՖԻԴԱՑՈՒՄԸ
ՄԱՆՐԱՑՄԱՆ ՓՈԽԼՈՒՄ**

Ներկայացված են գնդաղացում պղնձի օքսիդացած միներալի՝ տենորիտի և նատրիումի սուլֆիդի ու պոլիսուլֆիդի փոխազդեցության արդյունքները: Փորձնական ճանապարհով ապացուցված են նատրիումի պոլիսուլֆիդի բարձր ռեակցիոն ունակությունը և տենորիտից պղնձի սուլֆիդի առաջացման հնարավորությունը:

Առանցքային բառեր. տենորիտ, գնդաղաց, հիդրոջերմային սուլֆիդացում, նատրիումի պոլիսուլֆիդ, պղնձի սուլֆիդ:

Ներածություն. Ծանր գունավոր մետաղների օքսիդացած և խառը հանքանյութերի հարստացման գոյություն ունեցող տեխնոլոգիաների վերլուծությունը ցույց է տալիս, որ ֆլոտացումով հարստացման դեպքում մետաղների կորուստները պոչհանքերում պայմանավորված են նրանց օքսիդացած միացությունների առկայությամբ:


Պղնձի հեշտ հարստացվող սուլֆիդային հանքանյութերի սահմանափակ պաշարների պատճառով արտադրության մեջ ընդգրկվող դժվար հարստացվող օքսիդացած և խառը միներալային հումքի ծավալները անընդհատ ավելանում են: Այս միներալների հարստացման դժվարությունը, ի տարբերություն սուլֆիդայինի, հիմնավորված է օքսիդային միներալների բարձր հիդրոֆիլությամբ և, որպես արդյունք, ցածր ֆլոտացիոն ակտիվությամբ: Հանքանյութի հարստացման արդյունավետության բարձացման համար մշակվում են հանքաքարի նախապատրաստման հատուկ մեթոդներ, որոնցից է օքսիդացած միներալների նախնական սուլֆիդացումը՝ հետագա ֆլոտացման նպատակով [1, 2]:

Գոյություն ունեն օքսիդացած և դժվար հարստացվող խառը հանքանյութերի վերամշակման բազմաթիվ եղանակներ, որոնցից ամենատարածվածները Վ. Յա . Մոստովիչի՝ սորբցիոն ֆլոտացման, սեգրեգացիոն թրծման, կույտային տարրալուծման եղանակներն են: Ներկայումս դժվար հարստացվող հանքանյութերը վերամշակում են ծծմբաթթվային տարրալուծման մեթոդով, որը պահանջում է կոռոզիակայուն սարքավորումներ և ագրեսիվ ու թանկարժեք ռեագենտների մեծ ծախս [3]:

Հեռանկարային մեթոդը, որն ուղղված է գունավոր մետաղների օքսիդային ձևերի (օքսիդներ, կարբոնատներ, սուլֆատներ, մոլիբդատներ և այլն) փոխարկմանը հեշտ հարստացվող սուլֆիդային ձևի, համարվում է հիդրոջերմային սուլֆիդացումը:


Գործնականում գոյություն ունեն մետաղների ցածր և բարձր ջերմաստիճանային սուլֆիդացման գործընթացներ, որոնք ընթանում են համապատասխանաբար հետևյալ ջերմաստիճանային տիրույթներում՝ 293...413 և 1073...1773 Կ [4,5]: Սակայն պղնձի օքսիդացած և խառը հանքանյութերի սուլֆիդացումը բարձր ջերմաստիճաններում գործնականում դժվար է և տնտեսապես ոչ շահավետ:

Հանքանյութերի ֆլուտացման գործընթացում որպես ռեագենտ՝ սուլֆիդարար, օգտագործվում է նատրիումի սուլֆիդը, որի հիդրոլիզի հետևանքով լուծույթներում ընթանում է խիստ հիմնային ռեակցիա:



25° C-ում, 0,1 ն. լուծույթում Na_2S -ի հիդրոլիզի աստիճանը կազմում է 86,5%: Հետագա հիդրոլիզն ըստ ռեակցիայի՝ $\text{NaHS} + \text{H}_2\text{O} \rightleftharpoons \text{NaOH} + \text{H}_2\text{S}$, գործնականում չի ընթանում: 25° C-ում, 0,1 ն. լուծույթում NaHS -ի հիդրոլիզն ընթանում է 0,12%-ով:


Նատրիումի պոլիսուլֆիդները (Na_2S_2 , Na_2S_3 , Na_2S_4 , Na_2S_5) ջրում անկայուն են և քայքայվում են՝ առաջացնելով նատրիումի սուլֆիդ և ատոմական ծծումբ: Այդ դեպքում սուլֆիդացման գործընթացում մասնակցում են երկու սուլֆիդարար՝ նատրիումի սուլֆիդ և ատոմական ծծումբ: Հետևաբար՝ քիմիական փոխազդեցություններում պոլիսուլֆիդը կարելի է դիտարկել որպես մոնոսուլֆիդ, որին միացած են ծծմբի լրացուցիչ ատոմներ [6]: Այդ իսկ պատճառով սուլֆիդացման գործընթացներն ընթանում են ավելի արդյունավետ:



Հիդրոջերմային ռեակցիայի ընթացքում պղնձի (II) օքսիդը փոխազդում է նաև ատոմական ծծմբի հետ: Պարզվել է, որ պղնձի (II) օքսիդի հիդրոջերմային սուլֆիդացման ժամանակ առաջնահերթ ընթանում է հետևյալ ռեակցիան՝



Ռեակցիա 2-ում ծծմբական թթվի բացակայությունը բացատրվում է նրանով, որ Na_2S -ի հիդրոլիզի ժամանակ առաջացած H_2S -ը փոխազդում է ծծմբական թթվի հետ հետևյալ ռեակցիայով [7]՝



Նատրիումի սուլֆիդով սուլֆիդացման դեպքում պղնձի օքսիդացած միներալների մակերևույթների վրա առաջանում է սուլֆիդային թաղանթ: Թաղանթը


հիմնային միջավայրում փխրուն է, ոչ ամուր և ֆլուտացիայի ժամանակ հեշտ քայքայվում է:

Աշխատանքում ներկայացված են գնդադացում տենորիտի՝ նատրիումի պոլիսուլֆիդի (Na_2S_5) և նատրիումի սուլֆիդի (Na_2S) միջոցով սուլֆիդացման հետազոտությունները:

Մեխանիկական ակտիվացման կիրառումը թույլ է տալիս ավելացնել պինդ մարմինների ռեակցիոն ունակությունը՝ բյուրեղային կառուցվածքում արատների առաջացման և դիֆուզիայի գործընթացի արագացման հաշվին:

Հիդրոջերմային սուլֆիդացման գործընթացը՝ նոր պինդ ֆազի առաջացմամբ, սովորաբար դժվարանում է նրանով, որ պինդ նորագոյացությունները դժվարացնում են ռեակցիայի մուտքը դեպի միջուկի ներսը: Ռեակցիայի արագությունը սահմանափակվում է դիֆուզիոն գործընթացներով: Նմանատիպ փոխազդեցությունների դեպքում մանրացումը հնարավորություն է տալիս մշտապես թարմացնել հանքանյութի մակերևույթը, որը թույլ է տալիս ռեակցիայի արգասիքների առանձնացումը նոր պինդ ֆազի առաջացումով:

Na_2S -ի և Na_2S_5 -ի կիրառմամբ ընթացող սուլֆիդացման ռեակցիաների՝ Գիբսի էներգիաների հետ համեմատության համար կատարվել են թերմոդինամիկական հաշվարկներ: Գիբսի էներգիայի փոփոխության հաշվարկները կատարվել են Տեմկին-Շվարցմանի մեթոդով: Նկ. 1-ում ներկայացված է Գիբսի էներգիայի մեծության փոփոխությունը՝ կախված ջերմաստիճանից:



Նկ. 1. Գիբսի էներգիայի մեծության փոփոխության կախվածությունը ջերմաստիճանից

Ինչպես երևում է նկարից, պոլիսուլֆիդի փոխազդեցության ռեակցիան ունի ΔG -ի մեծ բացասական արժեք, որը հաստատում է նատրիումի պոլիսուլֆիդով պղնձի սուլֆիդի ստացման հնարավորությունը:

Աշխատանքի նպատակը պղնձի օքսիդացած հանքանյութերի սուլֆիդացման գործընթացի հիմնական պարամետրերի որոշումը և դժվար հարստացվող պղնձի օքսիդացած հանքանյութերի վերամշակման տեխնոլոգիայի մշակումն են:

Հետազոտության արդյունքները. Մանրացման փուլում սուլֆիդացման գործընթացի փորձնական հետազոտությունները կատարվել են 0,9 g/l ծավալով կերամիկական գնդաղացում: Նյութերի բեռնումից հետո աղացի թմբուկը տաքացվում է մինչև պահանջվող ջերմաստիճանը, որից հետո կատարվում է սուլֆիդացման գործընթացը:

Փորձերը կատարվում են ռենտգենաֆազային (URD-63 Գերմանիա) և քիմիական անալիզների միջոցով:


Նմուշներում պղնձի քանակությունը որոշվել է ատոմա-աբսորբցիոն սպեկտրաչափի (Aanalyst-600, Perkin Elmer) միջոցով:

Որպես սուլֆիդարարներ օգտագործվել են նատրիումի սուլֆիդը (ГОСТ 2053-77) և նատրիումի պոլիսուլֆիդը:

Հետազոտությունները կատարվել են հետևյալ մոդելային համակարգով՝ «տենորիտ (CuO)–նատրիումի սուլֆիդ (Na_2S)», «տենորիտ–նատրիումի պոլիսուլֆիդ (Na_2S_5)»:

Սուլֆիդարարի ծախսը կազմվում է տենորիտի զանգվածի ստեխիոչափական քանակով: Սուլֆիդացման աստիճանը գնահատվել է սուլֆիդացումից հետո վերջնական արգասիքում պղնձի սուլֆիդի քանակական պարունակությամբ: Պղնձի օքսիդացած միներալի սուլֆիդացման արագությունը կախված է գործընթացի տևողությունից, ջերմաստիճանից, միջավայրի pH -ից և սուլֆիդարարի կոնցենտրացիայից:


Փորձերը կատարվել են 60...90 $^{\circ}C$ տևողությամբ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ նատրիումի սուլֆիդը կարող է առաջացնել ամուր սուլֆիդային թաղանթներ միայն pH -ը 7-ից ոչ ավելի դեպքում: Նկ. 2-ում պատկերված են ելանյութի՝ տենորիտի, տենորիտ - նատրիումի սուլֆիդ խառնուրդից 60 $^{\circ}C$ մեխանաքիմիական մշակումով սինթեզված և տենորիտ - նատրիումի սուլֆիդ խառնուրդից 60 $^{\circ}C$ մեխանաքիմիական մշակումով, pH -ը 5...6-ի դեպքում, սինթեզված նմուշների ռենտգենագրերը: Ռենտգենագրերը ստացվել են ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտում:



Նկ. 2. ա) տենորիտ, բ) տենորիտ - նատրիումի սուլֆիդ խառնուրդից սինթեզված 60 ր մեխանաքիմիական մշակումից հետո, գ) տենորիտ - նատրիումի սուլֆիդ խառնուրդից 60 ր մեխանաքիմիական մշակումով, pH-ը 5...6-ի դեպքում, սինթեզված նմուշների ռենտգենագրերը


Հետագոտվել է ջերմաստիճանի ազդեցությունը սուլֆիդացման գործընթացի վրա: Ջերմաստիճանը սուլֆիդացման գործընթացի կարևորագույն գործոններից մեկն է:

Նատրիումի սուլֆիդով տենորիտը սուլֆիդացնելիս սուլֆիդացումն աճում է 28-ից մինչև 45% (նկ. 3):



Նկ. 3. Նատրիումի սուլֆիդով տենորիտի սուլֆիդացման աստիճանի կախվածությունը գործընթացի տևողությունից

Նատրիումի պոլիսուլֆիդով տենորիտի սուլֆիդացման գործընթացը մանրացման փուլում տալիս է հետևյալ արդյունքը. 298...353 K ջերմաստիճանի բարձրացման դեպքում սուլֆիդացման աստիճանը բարձրացնում է 30-ից մինչև 55% (սուլֆիդարարի մաքսիմալ ծախսի դեպքում) (նկ. 4):



Նկ. 4. Նատրիումի պոլիսուլֆիդով տենորիտի սուլֆիդացման աստիճանի կախվածությունը գործընթացի տևողությունից

Եզրակացություն. Կատարվել են նատրիումի սուլֆիդի և պոլիսուլֆիդի հետ տենորիտի սուլֆիդացման ռեակցիաների թերմոդինամիկական հաշվարկները 298...353 K ջերմաստիճաններում: Ցույց է տրված, որ նատրիումի պոլիսուլֆիդով փոխազդեցությունն ընթանում է ΔG-ի մեծ բացասական արժեքով, ինչն ապացուցում է պոլիսուլֆիդի ստացման մեծ հնարավորությունը: Հետազոտվել են նատրիումի սուլֆիդով և պոլիսուլֆիդով տենորիտի սուլֆիդացման գործընթացները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Абрамов А.А.** Флотационные методы обогащения. -3-е изд. -М.: МГГУ, 2008. – 710 с.
2. **Абрамов А.А.** Технология переработки и обогащения руд цветных металлов.- Кн. 1. -М.: МГГУ, 2005. -575 с.
3. **Загайнов В.Г.** Объективная необходимость конверсии технологии первичного обогащения минерального сырья // Горный журнал Казахстана. -2012. -№4. - С. 48-52.
4. **Клушин Д.Н.** Сульфидирование цветных металлов. – М.: Металлургия, 1968. - 212 с.
5. **Литвин Б.Н., Поколитов В.И.** Гидротермальный синтез неорганических соединений.- М.: Наука, 1984. – 185 с.
6. **Антонов В.А.** Взаимодействие оксидов меди, свинца и цинка с элементарной серой в гидротермальных условиях: Автореф. дис. ... к.х.н.- Алма-Ата, 1989. -23 с.
7. **Wang H., Dalla Lana, I.G. and Chuang, K.T.** Kinetics and mechanism of oxidation of hydrogen sulfide by concentrated sulfuric acid // Industrial and Engineering Chemistry Research. - 2002a. - 41(26). – P. 6656-6662.

Ընդհանուր և անորգանական քիմիայի ինստիտուտ: Նյութը ներկայացվել է խմբագրություն 12.06.2017:

**А.О. ОВСЕПЯН, Г.Г. ШОЛИНЯН, Т.А. ВАНЯН, С.А. АРУТЮНЯН,
А.Р. АКОПЯН**

ГИДРОТЕРМАЛЬНАЯ СУЛЬФИДИЗАЦИЯ ОКИСЛЕННЫХ МИНЕРАЛОВ МЕДИ НА СТАДИИ ИЗМЕЛЬЧЕНИЯ

Представлены результаты взаимодействия окисленных минералов меди - тенорита с сульфидом и полисульфидом натрия в шаровой мельнице. Экспериментальным путем доказаны высокая реакционная способность полисульфида натрия и возможность образования сульфида меди из тенорита.

Ключевые слова: тенорит, шаровая мельница, гидротермальная сульфидизация, полисульфид натрия, сульфид меди.

**A.H. HOVSEPYAN, G.G. SHOLINYAN, T.A. VANYAN, S.A. HARUTYUNYAN,
A.R. HAKOBYAN**

**HYDROTHERMIC SULPHIDATION OF COPPER OXIDE ORES IN THE
GRINDING STAGE**

The interaction results of the oxidized mineral of copper-tenorite with sodium sulphide and polysulphide in a ball mill are presented. The high reactivity of sodium polysulphide and the formation opportunity of copper sulphide from tenorite have been experimentally confirmed.

Keywords: tenorite, ball mill, hydrothermic sulphidation, sodium polysulphide, copper sulphide.

Ա.Խ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Գ.Ա. ԱՂԶՈՑԱՆ, Տ.Ռ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Ն.Հ. ՉՈՒԽԱԶՅԱՆ

ՄԱԳՆԻՍՏԱԿԱՌԱՎԱՐՎՈՂ ԿԱԽՈՑԻ ԷԼԵԿՏՐԱՄԱԳՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Ուսումնասիրվել է ավտոմեքենայի մագնիսական (մագնիսառեոլոգիական) հեղուկով կառավարվող կախոցի էլեկտրամագնիսական համակարգը, կազմվել է մագնիսական շղթայի փոխարինման սխեման, մշակվել է համակարգի մաթեմատիկական մոդելը: Հետազոտությունների ընթացքում ընդունվել է, որ կախոցի՝ յուղում կախված մագնիսական նյութի մասնիկներն ունեն խորանարդի ձև: Առաջարկվել են կախոցի կառավարման փաթեթի հոսանքի արժեքի և կախոցի և յուղում մագնիսական մասնիկների շարժման արագության փոխադարձ կախվածության բացահայտման եղանակները:

Առանցքային բառեր. ավտոմեքենա, կախոց, թրթռամեղմիչ սարք, մագնիսական հեղուկ, մագնիսառեոլոգիական հեղուկ, էլեկտրամագնիսական համակարգ, մագնիսական շղթա, մաթեմատիկական մոդել, քարշային բնութագիր:

Ավտոմեքենաների անշարժ մասի (թափք) և շարժվող մասի միջև առաձգական կապ ստեղծող սարքերի համախմբի՝ կախոցի բաղադրիչներից է թրթռամեղմիչ սարքը (ամորտիզատոր), որը նախատեսված է մեքենայի թափքի ու անիվների տատանումների մարման համար (տատանումների մեխանիկական էներգիան կերպափոխվում է ջերմային էներգիայի և հաղորդվում շրջապատող միջավայրին) [1]: Այսուհետ կախոցը քննարկելիս նկատի կունենանք թրթռամեղմիչ սարքը:

Թրթռամեղմիչ հատկությունների տեսանկյունից կախոցները լինում են չկառավարվող (առանց թրթռամեղմման ցուցանիշների կառավարման) և կառավարվող (թրթռամեղմման ցուցանիշների կառավարումով) [1]: Վերջիններիս կառավարումն իրագործվում է ավտոմեքենայի համակարգչով, որը բեռի, արագության, ճանապարհային պայմանների և այլ գործոնների մասին համապատասխան տվիչներից ստանում է ազդանշաններ ու ձևավորում կախոցին ուղղված հրամանները: Ժամանակակից գերավտոմեքենաներում (supercar) տեղադրվող կառավարվող կախոցների հիմնական տեսակներից է մագնիսական (մագնիսառեոլոգիական) հեղուկով կախոցը [1], որի միացի՝ յուղում կախված վիճակում գտնվում են յուղի ծավալի 30%-ը կազմող 3...10 մկմ չափերով մագնիսական նյութի (երկաթ, նիկել, կոբալտ և այլն) մասնիկներ: Սրանք արձագանքում են արտաքին մագնիսական դաշտին. յուղի մեջ անկանոն կախված մասնիկները ձգող էլեկտրամագնիսական ուժի ազդեցության տակ ձգվում-միանում են և կազմում տարրական կամրջակներ: Բնականաբար, այս դեպքում փոխվում են յուղի և, համապատասխանաբար,

կախոցի բնութագրերը. երբ կախոցի կառավարման փաթույթը միացվում է սնման աղբյուրին, ու դրանով հոսանք է հոսում, ստեղծված մագնիսական դաշտի ազդեցության տակ, մասնիկների կազմած կամրջակների շնորհիվ, մեծանում է յուղի մածուցիկությունը, դժվարանում դրա հոսունությունը, և աճում կախոցի կոշտությունը: Իսկ երբ փաթույթն անջատվում է սնման աղբյուրից, ձգող էլեկտրամագնիսական ուժը վերանում է, մասնիկներն իրարից հեռանում են, և կախոցի կոշտությունը փոքրանում է (մասնիկները պատվում են ոչ ֆերոմագնիսական նյութի շերտով, որպեսզի մագնիսական դաշտի ազդեցությունը վերացնելուց հետո բացառվի դրանց հպված-կպած վիճակում մնալը) [1]: Այսպիսով, կառավարման փաթույթի հոսանքի և, համապատասխանաբար, ձգող էլեկտրամագնիսական ուժի արժեքի փոփոխումով կարելի է ազդել մասնիկների փոխադասավորության և, հետևաբար, յուղի ու կախոցի բնութագրերի վրա. որքան մեծ է հոսանքը, այնքան ավելի մեծ է կախոցի կոշտությունը և ընդհակառակը (հոսանքի արժեքը, ինչպես վերը նշել ենք, փոփոխվում է ավտոմեքենայի համակարգչից ստացված հրահանգների համաձայն, որոնք ձևավորվում են մեքենայի ընթացքի ու ճանապարհի առանձնահատկություններից ելնելով): Էլեկտրամագնիսական համակարգի խափանման դեպքում մագնիսական կախոցն աշխատում է որպես սովորական չկառավարվող հիդրավլիկական կախոց [1]:

Մագնիսական դաշտի ազդեցության տակ յուղում կախված մասնիկները կկարողանան տեղաշարժվել և ձևավորել կամրջակներ, եթե դրանց վրա ազդող P_t ձգող էլեկտրամագնիսական ուժը գերազանցի հեղուկի P_h հակազդող ուժը՝ $P_t > P_h$, կամ՝

$$P_t = K_{\text{պ}} P_h, \quad (1)$$

որտեղ $K_{\text{պ}}$ -ն գործակից է ($K_{\text{պ}} > 1$):

Հեղուկում շարժվող մարմնի վրա ազդող դիմադրող ուժը, որը, մասնավորապես, կախված է մարմնի շարժման v արագությունից, կարելի է որոշել հետևյալ հայտնի բանաձևով [2].

$$P_h = CA \frac{\rho v^2}{2}, \quad (2)$$


որտեղ C -ն հեղուկում շարժվող մարմնի ձևից կախված գործակից է, ρ -ն՝ հեղուկի խտությունը, A -ն՝ մարմնի ճակատային մակերևույթի պրոյեկցիայի մակերեսը շարժման ուղղությամբ:

Մասնիկի շարժման v արագությունը կարելի է որոշել կախոցի աշխատանքի արագությունից ելնելով. որքան մեծ է կախոցի պահանջվող արագությունը, այնքան ավելի արագ պետք է յուղում շարժվեն մասնիկները՝ կախոցի այս կամ այն աշխատանքային վիճակն ապահովելու համար: Ունենալով մասնիկների v արա-

գությունը, կարելի է (2)-ով հաշվարկել հակազդող P_h ուժի, իսկ (1)-ով՝ P_z ձգող էլեկտրամագնիսական ուժի արժեքները: Վերջինս, համաձայն Մաքսվելի բանաձևի [3], կախված է կախոցի էլեկտրամագնիսական համակարգի Φ մագնիսական հոսքի արժեքի քառակուսուց: Հաշվարկելով Φ -ի արժեքը, կարելի է էլեկտրամագնիսական համակարգի մագնիսական շղթայի ուղիղ խնդրի [4] լուծումով ստանալ կառավարման փաթույթի F մագնիսաշարժ ուժի (ՄՇՈՒ) այն արժեքը, որի դեպքում յուրում կախված մասնիկները կշարժվեն անհրաժեշտ արագությամբ՝ ապահովելով կախոցի պահանջվող արագագործությունը: Այսինքն՝ հնարավոր կլինի բացահայտել մագնիսական յուրով կախոցի կառավարման տեսանկյունից կարևոր $i_{\varphi} = F/W = f(v)$ կախվածությունը (W –ն փաթույթի գալարների քանակն է): Միաժամանակ, նոր ստեղծվող կախոցի պարագայում կառավարման փաթույթի F ՄՇՈՒ-ի հայտնի արժեքով հնարավոր կլինի նախագծել կառավարման փաթույթը՝ ընտրել հաղորդալարը, որոշել գալարների W քանակը, P հզորությունը և այլն [5]:


Վերը ձևակերպված խնդրի լուծման համար կազմենք կախոցի էլեկտրամագնիսական համակարգի մաթեմատիկական մոդելը:

Նկ. 1-ում 1-ը կախոցի արտաքին պատյանն է, 2-ը՝ կախոցի միացի արտաքին մասը (արտաքին գլան), 3-ը՝ միացի ներքին մասը (գլանաձև միջուկ), 4-ը՝ կախոցի կառավարման փաթույթը (կոճը), 5-ը՝ արտաքին (արտաքին գլան) և ներքին (գլանաձև միջուկ) մասերը բաժանող ներմիացային ճեղքը, 6-ը՝ արտաքին ու ներքին մասերը ամրակապող (կապակցող) տափօղակը, 7-ը՝ միացը տեղաշարժող ձողը, իսկ 8-ով նշված է միացի ներքին ծավալը լցնող յուղը, որի ծավալի 30%-ը կազմում են մագնիսական մասնիկները: Նկարի վրա նշված են նաև կախոցի էլեկտրամագնիսական համակարգի հիմնական չափերը. l_{μ} -ն միացի երկարությունն է, l_{φ} -ն՝ կառավարման փաթույթի (կոճի) երկարությունը, d_{μ} -ն՝ փաթույթի (կոճի) ներքին տրամագիծը, d_{μ} -ն՝ գլանաձև միջուկի տրամագիծը, d_{qt} -ն՝ արտաքին գլանի ներքին տրամագիծը, d_{qr} -ն՝ արտաքին գլանի արտաքին տրամագիծը:




Նկ. 1. Կախոցի էլեկտրամագնիսական համակարգը

Նկ. 2ա –ում կախոցի էլեկտրամագնիսական համակարգը պատկերված է այն դեպքում, երբ կախոցի կառավարման փաթույթը միացված չէ սնման աղբյուրին, բացակայում է i_{φ} հոսանքը, համապատասխանաբար՝ նաև մագնիսական դաշտը, և մագնիսական մասնիկներն (ՄՄ) անկանոն կախված են միացի յուղում: Նկ. 2 բ-ում համակարգը պատկերված է այն դեպքում, երբ կառավարման փաթույթը միացված է սնման աղբյուրին, և փաթույթի հոսանքով ստեղծված մագնիսական դաշտով պայմանավորված՝ P_t ձգող էլեկտրամագնիսական ուժի ազդեցության տակ մագնիսական մասնիկները փոխադարձաբար ձգվել են ու կազմել տարրական կամրջակներ: Այստեղ Φ -ով նշված է մագնիսական հոսքի միջին գիծն այն դեպքում, երբ հոսքն ամբողջությամբ ընդգրկում է կառավարման փաթույթը (կցված է փաթույթի բոլոր գալարներին), և տարրական կամրջակները ձևավորվում են ներմխոցային ճեղքի մագնիսական հոսքով ընդգրկված տիրույթում:



Նկ. 2. Մագնիսական մասնիկները ներմիտցային ճեղքի յուղային միջավայրում.
1-գլանաձև միջուկ, 2-արտաքին գլան, 3-կառավարման փաթույթ, 4-յուղային միջավայր
(ներմիտցային ճեղք)

Էլեկտրամագնիսական համակարգի մագնիսական շղթայի փոխարինման սխեման կազմելու և համակարգի մաթեմատիկական մոդելը մշակելու համար ընդունենք, որ մասնիկներն ունեն խորանարդի ձև՝ կողի a չափով (a -ն ընդգրկում է նաև մասնիկի ոչ մագնիսական ծածկույթի Δ հաստության կրկնապատիկը) (նկ. 3 ա): Այս դեպքում կարող ենք պատկերացնել, որ մագնիսական դաշտի ազդեցության տակ, ներմիտցային ճեղքում, արտաքին գլանն ու գլանաձև միջուկը միացնող երևակայական ուղիղների վրա առաջանում են մագնիսական մասնիկներից կազմված չորսու-կամրջակներ (նկ. 3 բ), որոնց երկարությունը կախված է P_t էլեկտրամագնիսական ուժի արժեքից, հետևաբար՝ նաև i_{ϕ} փաթույթի հոսանքի ու Φ մագնիսական հոսքի արժեքներից. կամրջակը ձևավորվում է արտաքին գլանի պատի մոտ և P_t -ի աճին զուգընթաց երկարում մինչև ներքին գլանային միջուկը՝ մինչև ներմիտցային ճեղքի $l_{\Delta} = 0,5(d_{q\text{ ն}} - d_{\Delta})$ չափը (նկ. 4):



Նկ. 3. Խորանարդաձև մագնիսական մասնիկը (ա) և մասնիկների կազմած չորսու-կամրջակը (բ)


Մագնիսական հոսքի միջին գիծը բաժանենք մի քանի հատկանշական հատվածների՝ Ա, Բ, Գ, Դ (նկ. 4): Դրանցից յուրաքանչյուրի երկարության ու լայնական հատույթի մաթեմատիկական արտահայտությունները տրված են աղ. 1-ում:

Աղյուսակի արտահայտություններում k -ն գործակից է, որը ցույց է տալիս, թե ներմխոցային ճեղքի $l_{\text{ճ}}$ չափի որ մասն է կազմում մագնիսական մասնիկների կամրջակների երկարությունը: Աղյուսակի S_{q1} -ի արտահայտությունից կարելի է որոշել Գ1 տեղամասի հատույթի մակերեսի այն մասը, որը պատված է մագնիսական նյութով:

$$S'_{q1} = S_{q1} \left(\frac{S_{\text{մֆ}}}{S_{\text{մ}}'} \right), \quad (3)$$

որտեղ $S_{\text{մ}}'$ -ն մագնիսական մասնիկների նիստի ամբողջ մակերեսն է՝ $S_{\text{մ}}' = a^2$, իսկ $S_{\text{մֆ}}$ -ն՝ նիստի մագնիսական տիրույթի մակերեսը՝ $S_{\text{մֆ}} = (a - 2\Delta)^2$: Նշենք, որ ինչպես S_{q1} -ը (S'_{q1} -ը), այնպես էլ $S_{\text{Բ}}$ -ն ու S_{q2} -ը համապատասխան հատվածների միջին հատույթների մակերեսներն են:

Նկ. 5-ում տրված է կախոցի էլեկտրամագնիսական համակարգի մագնիսական շղթայի փոխարինման սխեման, որը կառուցվել է մագնիսական հոսքի ճանապարհի մագնիսական դիմադրությունների հաշվառումով: Այստեղ F -ը կառավարման փաթույթի ՄՇՈԻ-ն է, $R_{\text{մԱ}}$ -ն՝ մագնիսական հոսքի միջին գծի Ա, $R_{\text{մԲ}}$ -ն՝ Բ, $R_{\text{մԳ1}}$ և $R_{\text{մԳ2}}$ -ը՝ Գ և $R_{\text{մԴ}}$ -ն՝ Դ հատվածների մագնիսական դիմադրությունները: Շղթայի առանձին հատվածներում B մագնիսական ինդուկցիաների և U մագնիսական պոտենցիալների տարբերությունների մաթեմատիկական արտահայտությունները տրված են աղ. 2-ում, որտեղ H -ով նշված են համապատասխան հատվածներում մագնիսական լարվածությունները, իսկ Λ_{q2} -ով՝ Գ2 հատվածի մագնիսական հաղորդականությունը:




Նկ. 4. Մագնիսական Φ հոսքի միջին գիծը և դրա տեղամասերը.

1 - գլանաձև միջուկ, 2 - արտաքին զլան, 3 - կառավարման փաթույթ, 4 - մագնիսական կամրջակներ, 5 - ներմխողային ձեղք, U, F, Q, T -մագնիսական հոսքի միջին գծի հատկանշական հատվածներ

Աղյուսակ 1

Մագնիսական հոսքի միջին գծի հատվածների երկարությունների ու լայնական հատույթի մակերեսների արտահայտությունները

Հատվածը	Երկարությունը	Լայնական հատույթի մակերեսը
Ա	$l_U = 0,5(l_u + l_y)$	$S_U = \frac{\pi d_{yb}^2}{4}$
Բ	$L_F = 0,5(d_u - d_{yb})$	$S_F = 0,5\pi(d_u + d_{yb}) \frac{l_u - l_y}{2}$
Գ1-մագնիսական մասնիկներով տեղամաս	$l_{Q1} = l_{\Delta 1} = K l_{\Delta}$	$S_{Q1} = \pi(d_{qb} - k l_{\Delta}) \frac{l_u - l_y}{2}$
Գ2-մագնիսական յուղով տեղամաս	$l_{Q2} = l_{\Delta 2} = (1 - K) l_{\Delta}$	$S_{Q2} = \pi[d_u + (1 - k) l_{\Delta}] \frac{l_u - l_y}{2}$
Դ	$l_T = l_U = 0,5(l_u + l_y)$	$S_T = \frac{\pi}{4}(d_{qw}^2 - d_{qb}^2)$



Նկ. 5. Էլեկտրամագնիսական համակարգի մագնիսական շղթայի փոխարինման սխեման

Աղյուսակ 2

Մագնիսական շղթայի հատվածների մագնիսական դիմադրությունների և մագնիսական պոտենցիալների տարբերությունների մաթեմատիկական արտահայտությունները

Հատվածը	Մագնիսական ինդուկցիան	Մագնիսական պոտենցիալների տարբերությունը
Ա	$B_U = \Phi / S_U$	$U_{mU} = H_U l_U$
Բ	$B_F = \Phi / S_F$	$U_{mF} = H_F l_F$
Գ1- տեղամաս	$B_{Q1} = \Phi / S'_{Q1}$	$U_{mQ1} = H_{Q1} l_{Q1}$
Գ2- տեղամաս	$B_{Q2} = \Phi / S_{Q2}$	$U_{mQ2} = \Phi / \Lambda_{Q2}$
Դ	$B_{\gamma} = \Phi / S_{\gamma}$	$U_{m\gamma} = H_{\gamma} l_{\gamma}$

Մագնիսական շղթայի այն հատվածներում (Ա, Բ, Գ1, Դ), որտեղ հոսքն անցնում է մագնիսական նյութով, B ինդուկցիայի արժեքը համապատասխան արտահայտությունով (հոսքի և համապատասխան հատույթի մակերեսի հարաբերությունը) որոշելուց հետո տվյալ նյութի մագնիսացման կորից որոշվում է H մագնիսական լարվածության արժեքը: Ոչ մագնիսական՝ յուղային հատվածի հաղորդականության համար կարելի է օգտագործել $\Lambda_{Q2} = \mu_0 S_{Q2} / l_{Q2}$ հայտնի արտահայտությունը (μ_0 –ն վակուումի մագնիսական թափանցելիությունն է):

Այժմ, ունենալով համակարգը նկարագրող մաթեմատիկական արտահայտությունների համախումբը, հնարավոր է որոշել կախոցի կառավարման փաթույթի F ՄՇՈՒ-ի և i_{ψ} հոսանքի ($i_{\psi} = F/W$) այն արժեքները, որոնց դեպքում մասնիկները յուղում կշարժվեն հանձնարարված v արագությամբ կամ դրանց վրա կգործի անհրաժեշտ P_t էլեկտրամագնիսական ուժը: Այդ նպատակով հակադրող P_h ուժը կորոշվի (2)-ով, դրա մեջ տեղադրելով A -ի հետևյալ արտահայտությունը՝

$$A = \pi[d_{\mathcal{U}} + 2(1 - k)l_{\mathcal{A}}]\frac{l_{\mathcal{U}} - l_{\mathcal{B}}}{2}. \quad (4)$$

Վերը դիտարկված (1) արտահայտությամբ կհաշվարկվի P_t -ն, և հայտնի բանաձևով [3, 5] կորոշվի Φ հոսքի արժեքը՝

$$\Phi = \sqrt{2P_t \mu_0 S'_{q2}}, \quad (5)$$

որտեղ S'_{q2} –ը յուրում շարժվող մասնիկների ճակատային մակերևույթի A մակերեսի այն մասն է, որ կազմում են մասնիկների մագնիսական տիրույթները՝ $S'_{q2} = AS_{\mathcal{U}}/S_{\mathcal{U}}'$:

Այնուհետև աղ. 1 և 2-ի արտահայտություններով կորոշվեն մագնիսական շղթայի բոլոր բնութագրական մեծությունները, և մագնիսական շղթայի ուղիղ խնդրի լուծումով [4] կորոշվի փաթույթի ՄՇՈՒ-ի փնտրվող արժեքը.

$$F = U_{m\mathcal{U}} + 2U_{m\mathcal{F}} + 2U_{mq1} + 2U_{mq2} + U_{m\mathcal{Z}}. \quad (6)$$

Այսպիսով, կախոցի էլեկտրամագնիսական համակարգի մագնիսական շղթայի փոխարինման սխեմայի և մաթեմատիկական մոդելի կազմման ու մագնիսական շղթայի ուղիղ խնդրի լուծման ճանապարհով հնարավոր եղավ բացահայտել կախոցի կառավարման տեսանկյունից կարևոր $F = f(v)$ կամ $i_{\mathcal{F}} = f(v)$ կախվածությունները:


Էլեկտրամագնիսական համակարգի մագնիսական շղթայի հակադարձ խնդրի [4] լուծման ճանապարհով հնարավոր կլինի բացահայտել $v = f(i_{\mathcal{F}})$ կամ $v = f(F)$ կախվածությունները: Այս դեպքում կառավարման փաթույթի $i_{\mathcal{F}}$ հոսանքի կամ F ՄՇՈՒ-ի հայտնի արժեքի համար որոշվում է Φ հոսքի արժեքը, իսկ այնուհետև, (5) և (2) բանաձևերով, համապատասխանաբար, P_t ուժը և v արագությունը:

Հակադարձ խնդիրը լուծելու նպատակով $l_{\mathcal{A}2} = (1 - k)l_{\mathcal{A}} -$ ի մի ինչ-որ չափի համար Φ հոսքին տրվում են Φ_i արժեքներ [4], և ուղիղ խնդրի վերը դիտարկված եղանակով ստացվում են ՄՇՈՒ-ի համապատասխան F_i արժեքները [4]: Այնուհետև, խնդրի լուծման դիտարկվող տարբերակում կտոր-գծային մոտարկմամբ [6], F ՄՇՈՒ-ի հայտնի (հանձնարարված) արժեքով որոշվում է Φ -ի փնտրվող արժեքը:

Էլեկտրամագնիսական համակարգերի կարևորագույն բնութագրերից է քարշային բնութագիրը [3], որը կառավարման փաթույթի F ՄՇՈՒ-ի որոշակի արժեքի դեպքում P_t ուժի կախվածությունն է էլեկտրամագնիսի ոչ մագնիսական աշխատանքային բացակի չափից ($l_{\mathcal{A}2}$): Բնութագիրը կառուցելու նպատակով հակադարձ խնդիրը լուծվում է $l_{\mathcal{A}2}$ -ի մի շարք արժեքների համար, և Φ հոսքի ստացված արժեքներով որոշվում P_t ուժը:

Այստեղ առաջարկվող եղանակով միացի էլեկտրամագնիսական համակարգը բնորոշող մեծությունների հետևյալ արժեքների համար լուծվել է մագնիսական շղթայի ուղիղ խնդիրը. $d_{qu} = 90$ մմ, $d_{qu} = 70$ մմ, $d_{uf} = 60$ մմ, $d_{qu} = 35$ մմ, $l_d = 5$ մմ, $k = 0,3$, $l_{uf} = 80$ մմ, $l_y = 40$ մմ, $a = 10$ մմ, $\Delta = 0,5$ մմ, $v = 20$ մ/վ, $c = 0,1$, $\rho = 900$ կգ/մ³: Մագնիսական մասնիկների նյութի համար ընտրվել է 10 մակնիշի պողպատը, որի մագնիսացման կորը խնդրի լուծման ընթացքում ներկայացվել է աղյուսակային տեսքով, իսկ B ինդուկցիայի հայտնի արժեքով H լարվածության արժեքը որոշելիս կիրառվել է կտոր-գծային մոտարկման մեթոդը [6]: Կառավարման փաթույթի ՄՇՈՒ-ի հաշվարկային արժեքը կազմել է $F=1183,94$ Ա:

Նկ. 6-ի գրաֆիկների վրա տրված է մագնիսական շղթայի հակադարձ խնդրի լուծման ճանապարհով ՄՇՈՒ-ի $F=1183,94$ Ա հաշվարկային արժեքի համար ստացված $P_L(l_{d2})$ քարշային բնութագիրը: Նույն գրաֆիկի վրա, համեմատության նպատակով, կառուցվել են համակարգի քարշային բնութագրերը ՄՇՈՒ-ի $F=1000$ Ա և $F=500$ Ա արժեքների համար:



Նկ. 6. Կախյալ էլեկտրամագնիսական համակարգի քարշային բնութագիրը

Եզրակացություն. Ժամանակակից գերավտոմեքենաներում կիրառվում են մագնիսական (մագնիսառեղդիական) հեղուկով կախոցներ, որոնց բնութագրերը փոփոխվում են՝ կախված բեռից, արագությունից, ճանապարհային պայմաններից և այլն: Այս կախոցների նախագծման և աշխատանքային բնութագրերի կառավարման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն կախոցի յուղային միջավայրի մագնիսական մասնիկների շարժման արագության և կախոցի կառավարման փաթույթի հոսանքի (ՄՇՈՒ-ի) փոխադարձ կախվածությունները: Վեր-

ջիններին բացահայտման նպատակով կազմվել են կախոցի էլեկտրամագնիսական համակարգի մագնիսական շղթայի փոխարինման սխեման ու մաթեմատիկական մոդելը, առաջադրվել և լուծվել են մագնիսական շղթայի հաշվարկի ուղիղ և հակադարձ խնդիրները, կառուցվել են համակարգի քարշային բնութագրերը:

Հետազոտությունը կատարվել է ՀԱՊՀ էլեկտրամագնիսական համակարգերի ու Ավտոմատացված համակարգերի մոդելավորման բազային գիտահետազոտական լաբորատորիաներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Савич Е.Л.** Легковые автомобили. - 2-е издание. - Минск: Новое знание; Москва: ИНФРА-М, 2013. - 752 с.
2. **Прандтль Л.** Гидроаэромеханика. - Ижевск: НИЦ Регулярная и хаотическая динамика, 2000. - 576 с.
3. **Գրիգորյան Ա.Խ.** Կառավարման էլեկտրական ապարատներ: Ուսումնական ձեռնարկ. - Եր.: ՀՊՃՀ, Ճարտարագետ, 2011. - 176 էջ:
4. **Գրիգորյան Ա.Խ.** Կառավարման և մեքենայացման էլեկտրամագնիսական համակարգեր (հետազոտություն, հաշվարկ և նախագծում, նոր համակարգերի մշակում). Դոկ.ատեն. սեղմագիր. - Եր., 1996. - 88 էջ:
5. **Соболев С.Н.** Расчет и конструирование низковольтной электрической аппаратуры. - М.: Высшая школа, 1981. - 224 с.
6. **Бахвалов Н.С., Жидков Н.П., Кобельков Г.М.** Численные методы. - М.: Лаборатория базовых знаний, 2001. - 636 с.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան: Նյութը ներկայացվել է խմբագրության 25.10.2017:

Ա.Х. ГРИГОРЯН, Г.А. АГДЖОЯН, Т.Р. МЕЛКОНЯН, Н.Г. ЧУХАДЖЯН

МОДЕЛИРОВАНИЕ И ОПРЕДЕЛЕНИЕ ХАРАКТЕРИСТИК ЭЛЕКТРОМАГНИТНОЙ СИСТЕМЫ МАГНИТОУПРАВЛЯЕМОЙ ПОДВЕСКИ

Исследована электромагнитная система магнитоуправляемой подвески автомобиля с магнитной (магнитореологической) жидкостью. Составлена схема замещения магнитной цепи, разработана математическая модель системы. В ходе исследований было принято, что подвешенные в масле подвески частицы магнитного материала имеют кубическую форму. Предложены способы выявления взаимных зависимостей значения тока обмотки управления подвеской и скорости движения в масле подвески магнитных частиц.

Ключевые слова: автомобиль, подвеска, амортизатор, магнитная жидкость, магнитореологическая жидкость, электромагнитная система, магнитная цепь, математическая модель, тяговая характеристика.

**A.KH. GRIGORYAN, G.A. AGHJOYAN, T.R. MELKONYAN,
N.H. CHUKHAJYAN**

**MODELING AND DETERMINING THE CHARACTERISTICS OF
ELECTROMAGNETIC SYSTEM OF THE MAGNETIC CONTROL SUSPENSION**

The electromagnetic system of the automobile suspension with magnetic control, working through magnetic (magnetorheologic) fluid is researched. The equivalent circuit of the magnetic circuit is plotted, the system's mathematical model is developed. During research, it was assumed that the suspensions of the magnetic material particle suspended in oil have a cubic shape. Methods for identifying the interdependencies between the current of the control system's winding and the velocity of the fluid's magnetic particles are proposed.

Keywords: automobile, suspension, shock absorber, magnetic fluid, magnetorheologic fluid, electromagnetic system, magnetic circuit, mathematical model, traction characteristic.

N.H. ABROYAN

RECURRENT NEURAL NETWORKS FOR CLASSIFYING THE REAL-TIME
DATA

In this paper, we provide a method of classification of real-time data by using recurrent neural networks. During the last several years, artificial intelligence researchers and specialists achieved notable results in visual, voice and natural language processing tasks by using new methods and approaches of deep learning, such as recurrent neural networks. However, not much research on the usage of such networks for elaboration of real-time data takes place. The goal of this work is exploring, experimenting and providing a new approach of classification of non-stationary data using recurrent neural networks.

Keywords: deep learning, recurrent neural networks, real-time data, classification.

Introduction. Starting from 2006, deep machine learning (more commonly called deep learning), has appeared as a new field of machine learning research [1]. During the past several years, the techniques and methods that have been developed from deep learning research have revolutionized and started a new era of machine learning and artificial intelligence. There are three important reasons which have made deep learning so popular today - the chip processing abilities have been drastically increased (e.g., general-purpose graphical processing units or GPGPUs), the size of data for training have been significantly advanced, and some new discoveries have been made in the field of machine learning and signal/information processing research [1]. The usage of convolutional, recurrent neural networks, restricted Boltzmann machines, and deep belief networks hugely improved the results of machine and deep learning problems. However, most researches that are carried out now are mostly devoted to visual, natural language, signal processing. Thus, researchers do not often talk about real-time machine learning, which has some specific properties [2]. However, the usage of real-time systems becomes more and more widespread. Thus, it is quite effective and convenient to use machine learning in real time systems for processing a huge amount of newly generated data. In this work, we continue the research started in [3] and [4]. As it turned out in [3], just by switching from classical feed forward to convolutional neural networks mainly keeping the structure of neural network, the performance will not always be improved. Hence, there is a need to take extra steps and pick a correct architecture for the neural network. Moreover, as no free lunch

theorem states, no algorithm performs universally better than any other [5]. For that reason, the architecture should be picked up individually for each specific problem. In this paper, we are concentrating on recurrent neural networks and propose a new method for classification of real-time non-stationary data.

Real-time data. In this work, by saying real-time data, we mean that its total correctness depends not only upon its logical correctness, but also upon the time in which it is performed [2]. A lot of examples of such data can be found in the financial sphere, as an example of such data could be stock prices that rapidly change over time. Another example of a real-time system can be the financial transaction fraud detection system. That is, all orders in stock exchange market are processed and tested for not being fraud. One way of doing that, is using Gaussian distribution [6]. After receiving an alert about possible fraud operation, a qualified person must decide whether that action is normal or not. In fact, that person solves a real-time classification problem, which can be modeled into a machine learning problem. Another and very popular example is deciding the credit approval, i.e. whether a person should be allowed to take a credit from a bank or not. In all above cases, correctness of data and approval decision strongly depend on time. Data of a market order or bank client can sometime later be changed qualitatively and may not be relevant to the training data. For now, we are going to train our model based on historical data and do classification in real time. For simplicity we will not take into account the mentioned fact that historical data may become irrelevant over some time (this is going to be a topic for further research). The basic structure of the described system is presented in Fig. 1.




Fig. 1. The illustration of the real-time classification system

In this work, experiments of neural networks are mainly performed for the examples of the credit approval and fraud detection problems.

Recurrent neural networks and related works. Recurrent neural networks are special type of networks, which are used for processing sequential data [5]. A

